ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«29» Սեպտեմբերի 2016 թ. N 32

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. *Հաստատել օրակարգը՝ համաձայն հավելվածի:*
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Վ.Հակոբյան ---------- / ստ./
Ռ.Մովսիսյան ---------- / ստ./
Թ.Սողոմոնյան ---------- / ստ./
Ռ.Խլղաթյան ---------- / ստ./
Գ.Համբարձումյան ---------- / ստ./
Հ.Գալստյան ---------- / ստ./

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կ.Տ.

2016 թվականի
Սեպտեմբերի «29»
գ. Մրգաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 7 ՆԻՍՏԻ
N 32 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 7 նիստի

1. Օրակարգի հաստատում:
2. Մրգաշատ համայնքի 2016-2020 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հաստատման մասին:
3. Մանկապարտեզի փակման մասին:
4. <<Մրգաշատի երաժշտական դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում սովորող սոցիալապես անապահով աշակերտների ուսման վարձի գիջման մասին:
5. *Համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի «2016 թվականի համայնքի բյուջեն հաստատելու մասին» N 37-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:*

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«29 » ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016 թ. N 33-Ն

ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Մրգաշատ համայնքի 2016-2020թթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Վ.Հակոբյան ---------- / ստ./
Ռ.Մովսիսյան ---------- / ստ./
Թ.Սողոմոնյան ---------- / ստ./
Ռ.Խլղաթյան ---------- / ստ./
Գ.Համբարձումյան ---------- / ստ./
Հ.Գալստյան ---------- / ստ./

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կ. Տ.

2016 թվականի
Սեպտեմբերի « 29»
գ. Մրգաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԾՐԱԳԻՐ

Կազմեց Մրգաշատ համայնքի ղեկավար Գ. Դանիելյան

Հաստատվել է համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 7 նիստում

Մրգաշատ — 2016 Թ.
(համայնքի անվանումը)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

1. Համայնքի իրավիճակի գնահատում 3

2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները 7

3. Ըստ առանձին բնագավառների
առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում
և կոնկրետ խնդիրների ձևակերպում 7

2016-2020 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման
ծրագրով ըստ առանձին բնագավառների նախատեսվող ծրագրերի,
միջոցառումների և աշխատանքների համառոտ ամփոփագիր 9

4. Համայնքի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում 10

5. Համայնքի զարգացման ծրագրի հիմնական ցուցանիշները 11

6. Գյուղատնտեսության ցուցանիշները 12

ՀԱՎԵԼՎԱԾ 1 Մրգաշատ համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը 13

ՀԱՎԵԼՎԱԾ 2 Մրգաշատ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը ... 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի զարգացման ծրագիրը իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի 2016-2020 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի ղեկավարի և նորընտիր ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Գալիք չորս տարում համայնքի զարգացման ծրագրային հիմնական ուղղություններն են

- պաշտպանել համայնքի բնակչության և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը,
- բարելավել համայնքի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները,
- ապահովել համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների պահպանումը , շահագործումը և նորոգումը,
- համայնքի տարածքում ստեղծել նոր աշխատատեղեր, զարգացնելով փոքր և միջին բիզնեսը, գյուղատնտեսությունը,
- հատուկ ուշադրություն դարձնել կրթության, մշակույթի և մարզական օջախների ռացիոնալացմանը և նպատակային գործունեությանը,
- միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ,
- բարելավել համայնքի ֆինանսական կացությունը՝ իրականացնելով հարկային և ոչ հարկային երակմուտների, տեղական տուրքերի և վճարների սահմանման և գանձման ճկուն քաղաքականություն,
- նպատակային օգտագործել համայնքային բյուջեի միջոցները՝ բարձրացնելով բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը և որակը. համայնքապետարանի և նրա ենթակայության կազմակերպությունների և ձեռնարկությունների աշխատանքի արդյունավետությունը:

- համայնքում կազմակերպել սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ համագործակցելով Արմավիրի մարզային փրկարարական ծառայության վարչության հետ:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Աշխարհագրական դիրքը, պատմական ակնարկ

Արմավիրի մարզի Մրգաշատ գյուղը հիմնադրվել է Իգդիրից, Ալաշկերտից և Բայազետից եկածների կողմից 1650-ական թթ: Գյուղը գտնվում է Արմավիր քաղաքից 4կմ հարավ-արևելք: Գյուղը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ: Գյուղից 1կմ հեռավորության վրա անցնում է Արմավիր_Երևան մայրուղին: Գյուղի վարչական տարածքով է անցնում հանրապետական նշանակության երկաթուղին: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 850մ բարձրության վրա: Գյուղի կլիման ձմռանը ցուրտ է, ամռանը՝ շոգ:

1.2 Ժողովրդագրություն

Գյուղում ապրում են 6438 բնակիչներ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 48.5%-ը:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է.

1. թոշակառուներ – 626
2. միակողմանի ծնողազուրկ երեխաներ -46
3. երկկողմանի ծնողազուրկ երեխաներ -1
4. հաշմանդամներ -94
5. նպաստառուներ -410
6. զոհվածների ընտանիքներ -3
7. աշխատունակներ - 3520
8. գրանցված ընտրողների թիվը -4184
9. աշխատանք ունեցողների թիվը -410
10. ընտանիքների թիվը –1946

1.3 Տեղական ինքնակառավարման մարմինները

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի /համայնքապետի/ կողմից. որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Համայնքապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով.

- Համայնքի ղեկավարի տեղակալ 1 դրույք
- Աշխատակազմի քարտուղար 1 դրույք

- Խորհրդական 1 դրույք
- Աշխատակազմի գլխավոր մասնագետ 1 դրույք
- Աշխատակազմի առաջատար մասնագետ 6 դրույք
- Ֆին. բաժնի պետ 1 դրույք
- Ֆին. բաժնի գլխավոր մասնագետ 2 դրույք
- Ֆին. բաժնի առաջատար մասնագետ 1 դրույք
- Ֆին. բաժնի 1-ին կարգի մասնագետ 1 դրույք
- քարտուղարուհի 1 դրույք
- կատարածու 1 դրույք
- տեխնիկական աշխատող 1 դրույք
- գերեզմանոցի պահակ 1 դրույք
- վարորդ 1 դրույք

Համայնքի ենթակառույցներն են՝

Մշակույթի տուն

- տնօրեն 1 դրույք
- գեղ. մասվ. 1 դրույք
- պարուսույց 1 դրույք
- ընբշաամարտի մարզիչ 1 դրույք
- ասեղն. դաս. 1 դրույք
- նկարչ. դաս. 1 դրույք
- հավաքարար 1 դրույք
- պահակ 1 դրույք

Գրադարաններ

- գրադարանի վարիչ 1 դրույք
- գրադարանի վարիչ 1 դրույք

Մանկապարտեզ

- մանկ. վարիչ 1 դրույք
- դաստիարակ 3.75 դրույք
- դաստ. օգնական 3 դրույք՝-
- խոհարար 1 դրույք
- երաժշտ. դաս. 0.42 դրույք
- անգլ. դաս. 0.42 դրույք
- բուժքույր 1 դրույք
- պահակ 1 դրույք
- տնտեսվար 0.5 դրույք
- հաշվապահ 0.5 դրույք
- գործավար 0.5 դրույք

Երաժշտական դպրոց

- տնօրեն 1 դրույք
- գործավար 0.5 դրույք
- տնտեսվար 0.5 դրույք
- հաշվապահ 0.5 դրույք
- դասատու 10 դրույք
- հավաքարար 1 դրույք

Համայնքապետարանի աշխատակազմի և ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 65 հոգուց:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակառույցների կառուցվածքը բերված է հավելված 1-ում:

1.4 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ և բերված է հավելված 2-ում:

Տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել է: Խմելու ջրի ներհամայնքային համակարգը հանձնված է «Նոր Ակունք» կազմակերպությանը շահագործման համար, իսկ ոռոգման ջրի ներտնտեսային ցանցը՝ Ջ.Օ.Ը -ին շահագործման համար: Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի:

1.5 Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն

Ստորգետնյա ջրերի բարձր լինելու պատճառով համայնքի հողերից 717 հա աղակալված են: Կենցաղային աղբի կուտակման համար համայնքում կա առանձնացված տարածք: Համայնքապետարանը տարվա ընթացքում 10 ամիս կազմակերպվում է աղբահանություն, ուստի տնային տնտեսությունների կողմից կատարվող աղբահանության հետևանքով աղտոտված է համայնքի տարածքից 2 հա: Դաշտապաշտպան անտառաշերտերի ոչնչացման հետևանքով հողերը ենթարկվում են էռոզիայի, բարձրացել է ցրտահարության տոկոսը:

1.6 Բնակարանային տնտեսություն

Համայնքում կա 1151 առանձնատուն, բնակֆոնդի մակերեսը կազմում է 227800քմ, որից 300քմ-ը համայնքային սեփականություն է, իսկ 227500քմ մասնավոր: Կիսակառույց առանձնատների թիվը 56 է: Բնակարանի կարիք ունեցող ընտանիքների թիվը կազմում է 210, որը տարեցտարի աճում է:

1.7 Հողատարածքների օգտագործում

- Համայնքի վարչական տարածքը -1788 հա
  որից՝
  - վարելահողեր -723
  - այգիներ և պտղատու ծառեր -141
  - անօգտագործելի հողեր 717
  - տնամերձ հողեր 310
  - սեփականաշնորհված հողեր -674
  - մեկ հողաբաժնի չափը -0.35
  - պետական պահուստային հողեր -68
  - գյուղամիջյան ճանապարհներ -52 կմ

Գյուղատնտեսություն

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է ցորենի, բանջար-բոստանային կուլտուրաների, առվույտի, պտղաբուծության և խաղողի մշակությամբ: Համայնքը ունի շուրջ 604 գլուխ խոշոր և 980 գլուխ մանր եղջերավոր անասուններ: համայնքի հողերից 220 հա ջրի սակավության պատճառով չի մշակվում:

Կրթություն

Գյուղում կա երկու միջնակարգ դպրոց 553 աշակերտներով: Երկու դպրոցներն էլ գտնվում են անմխիթար վիճակում և վերանորոգման կարիք ունեն: Դպրոցներն ունեն 110 աշխատատեղ. մեկ ուսուցչին ընկնում է 5 աշակերտ:

Գյուղն ունի 1 մանկապարտեզ, որը գտնվում է բարվոք վիճակում: Տարվա ընթացքում մանկապարտեզը գործում է 7 ամիս 100 երեխայով: Ջեռուցման բացակայության պատճառով մնացած ամիսներին չի գործում:

Մշակույթ, սպորտ, հոգևոր դաստիարակություն

Համայնքն ունի մեկ մշակույթի տուն, որը կառուցվել է 1950 թ. և գտնվում է բարվոք վիճակում, կազմակերպվում են հասարակական միջոցառումներ, տիկնիկային թատրոն, գործող գրադարանները ունեն 15373 կտոր գիրք, մի գրադարանը գտնվում է մշակույթի տանը: Գյուղում գործում է երաժշտական դպրոց իր 90 աշակերտներով: Շենքը գտնվում է անմխիթար վիճակում: Գյուղը ունի մարզահրապարակ, որտեղ ֆուտբոլ են պարապում 40 երեխաներ: Մարզահրապարակում կարելի է տեղադրել նստելատեղեր սպորտի զարգացման համար:

Առողջապահություն

Գյուղում գործում է մեկ ամբուլատորիա, որը գործում է նախկին կոլ. վարչության շենքում: Շենքը կառուցվել է 40 տարի առաջ, համայնքապետարանի համաֆինանսավորմամբ վերանորոգվել է: Կան համապատասխան գույք և սարքավորումներ: Ամբուլատորիան ունի երկու բժիշկ և ութ բուժաշխատող:

Համայնքի ուժեղ կողմերը

- Համայնքի տարածքով անցնում է երկաթուղին, Արմավիր-Երևան մայրուղին և Արմավիր քաղաքից գտնվում է 4կմ հեռավորության վրա:
- Համայնքը 90%-ով գազաֆիկացված է:
- Նորոգվում է խմելու ջրի ներհամայնքային համակարգը, գործում է 1000 համարանոց հեռախոսակայանը, որը թվայնացված է:
- Համայնքում գործում է 15-ից ավելի առևտրի հիմնական օբյեկտներ:

Համայնքի թույլ կողմերը

- Ոռոգման ներտնտեսային ցանցի շատ վատ վիճակ:
- Գործազրկության մակարդակը բարձր է:
- Սոցիալապես անապահով բնակչությունը կազմում է 45%:
- Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ:

Համայնքի հնարավորությունները

- Մեծ աշխատուժի առկայություն:
- Ուղղակի ընտրություններով ՏԻՄ-երի ընտրության հնարավորություն:

1.8 Համայնքին սպառնացող վտանգներ

- Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը:
- Ոռոգման ջրի անբավարար մատակարարումից մշակվող հողատարածքների քանակի նվազում:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌԱՁՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Ռազմավարությունը

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային, հանգստի պայմանները, գյուղը դարձնել բարեկարգ:

3. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՁՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՁԱԳՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

Ծրագիր 1
Երաժշտական դպրոցի շենքի վերանորոգում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Երաժշտական դպրոցի շենքը կառուցվել է 1974թ.: Շենքը գտնվում է անմխիթար՝ կիսաքանդ վիճակում:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- բարելավել աշխատանքային պայմանները:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- 2017թ. կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
- 2018թ հայտարարել մրցույթ և որոշել աշխատանքները իրականացնող շինարարական կազմակերպությունը:
- Աշխատանքներն իրականացնել 2020թ:

Ծրագրից սպասվող արդյունքները

Օպտիմալացնել երաժշտական դպրոցի աշխատանքային պայմանները:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Ծրագիրն իրականացնելու համար ըստ կանխատեսումների պահանջվում է 57000.0 հազ. դրամ:

Ծրագիր 2

Ոռոգման ներ-տնտեսային ցանցի վերանորոգում

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Մրգաշատ համայնքի ներ-տնտեսային ցանցը գտնվում է անմխիթար վիճակում: Վերջին անգամ վերանորոգման աշխատանքներ կատարվել են 1988թ.-ին:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- ապահովել ջրամատակարարումը
- բարձրացնել ցանցի շահագործման մակարդակը
- բարձրացնել հողօգտագործման մակարդակը և արդյունավետությունը հասցնել առավելագույնի

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

- Կնքել պայմանագիր ԾԻԳ-ի հետ, որի համաձայն ծրագրով պահանջվող գումարի 85%-ը կհատկացվի ԾԻԳ-ի կողմից, իսկ 15%-ը՝ համայնքային բյուջեից:
- Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2017-2020թթ.-ի ընթացքում:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը՝ կբարելավվի ոռոգման համակարգը, կբարձրացվի ազգաբնակչությանը ոռոգման ջրով մատակարարման մակարդակը:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 300000.0 հազ. դրամ: Ընդհանուր գումարի՝ հիմնադրամից պահանջվող 85%-ը կազմում է 255000.0 հազ. դրամ, համայնքի կողմից՝ 45000.0 հազ. դրամ:

2016-2020 թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ

<<	Ծրագրի, միջոցառման, աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Ծավալը	Ֆինանսական միջոցների անհրաժեշտ քանակը /հազ.դրամ/	Ֆինանսավորման աղբյուրները			Կատարման ժամկետները			Պատաս-խանատու	Ծանոթու-թյուն
					համայնքի բյուջե	դոնոր կազմ.	այլ (պետ. բյուջե և այլն	2017 թ. Ծավալ/ ֆին.միջ	2018 թ. Ծավալ/ ֆին.միջ	2020 թ. Ծավալ/ ֆին.միջ		
1.	Երաժշտական դպրոցի վերանորոգում			57 000.0	57 000.0						համայնքի ղեկավար, երաժշ. դպ. տնօրեն	
2.	Ոռոգման ներ-տնտեսային ցանցի վերանորոգում			300 000.0	45 000.0	255 000.0					համայնքի ղերկավար	

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքում այն ունի հետևյալ պատկերը:

(հազ. դրամ)

<<	Եկամուտների տեսակը	2016թ փաստ.	2017թ նախա-տեսված	2018թ կանխա տեսում	2019թ կանխա տեսում	2020թ կանխա տեսում
I.	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՈՆԱ-ԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	90220.8	138850.0	141050.0	143650.0	146150.0
Ա	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ					
Ա.1	ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ					
1.	ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	7565.8	34000.0	33950.0	34450.0	34950.0
1.1	Հողի հարկ	3007.4	21550.0	21000.0	21000.0	21000.0
1.2	Գույքահարկ	4557.0	12000.0	12500.0	13000.0	13500.0
1.3	Եկամտահարկ					
1.4	Այլ հարկ. եկամուտներ					
2	ՏՈՒՐՔԵՐ	1.4	450.0	450.0		
2.1	Պետական տուրքեր					
2.2	Տեղական տուրքեր	1.4	450.0	450.0	450.0	450.0
3	ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	570.9	1850.0	2100.0	2200.0	2200.0
3.1	Համայնքի վարչ. տար.-ում գտնվող հողերի վարձակալ. և օգտագործ. դիմաց գանձվող վճարներ	570.9	1550.0	1600.0	1700.0	1700.0
3.2	Գույքի վարձակալությունից եկամուտներ					
3.3	Կարչական իրավախախտումների համար ՏԻՄ կողմից վարչ. պատասխ. միջոցների կիրառումից եկամուտներ					
3.4	Տեղական վճարներ					
3.5	Այլ ոչ հարկ. եկամուտներ		300.0	500.0	500.0	500.0
Ա.2	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԿԱՊԻՏԱԼԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ	69.7				
Բ	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	67631.9	103000.0	105000.0	107000.0	109000.0
Բ.1	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ	67631.9	103000.0	105000.0	107000.0	109000.0
Բ.2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ					
	ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ	12676.5				
	ԸՆԴԱՄԵՆԸ	*88914.8*				

5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

<<	Ցուցանիշներ	Չափի միավոր	2016թ փաստ.	2017թ կանխ.	2018թ կանխ.	2019թ կանխ.	2020թ կանխ.
	1	2	3	4	5	6	7
1	Համայնքի տարածքը	հա	1788	1788	1788	1788	1788
2	Բնակչության թիվը	մարդ	6438	6440	6442	6454	6466
3	Ծնունդը	մարդ	62	65	67	67	67
4	Մահացությունը	մարդ	56	55	55	55	55
5	Աշխ. ռեսուրսները, այդ թվում	մարդ					
	ա)զբաղվածները ըստ տնտեսության ճյուղերի	մարդ					
6	Գործազրկության մակարդակը	%					
7	Առևտրի և սպասարկումների օբյեկտների թիվը	հատ	15	15	16	16	16
8	պահուստային հողեր	հա	68	68	68	68	68
9	պահուստային հողերի օգտագործման մակարդակ	%	80	90	95	95	100
10	Խմելու ջրի ներհամայնքային համակարգի երկարությունը	կմ	42	42	42	42	42
11	Ներհամայնքային ոռոգման համակարգի երկարությունը	կմ	65	65	65	65	67
12	Ոռոգման համակարգի տակ գտնվող հողեր	հա	1100	1100	1100	1100	1120
13	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	52	52	52	47.0	52
14	Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	47	47	47	45	45
15	Բնակ. ֆոնդ, այդ թվում	շենք/ հազ.քմ					
	• համայնքային		2	2	2	2	2
	• մասնավոր		1146	1147	1150	1151	1152
16	Բնակ.կարիք ունեցող ընտանիքների թիվը	ընտ.	118	117	115	110	109
17	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լ / օր	200	210	230	260	280
18	Ջրի կորուստները ներհամայնքային համակարգում	%	30	30	25	20	15
19	Սովորողների թիվը հանրակրթ. դպրոցում	մարդ	553	557	559	562	565
20	Երեխաների թիվը մանկապ.- ում	մարդ	110	110	110	110	110
21	Գյուղապետարանի և ենթակա-ռուցվածքների աշխատողների թիվը	մարդ	65	65	65	65	65
22.							
23.							
24.							
25.							

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը	1967 այդ թվում	
ա. անհատական տնտեսություն	1967	
բ. կոլեկտիվ տնտեսություն	-	
գ. պետական տնտեսություն	-	
2. Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը.		
ա. ցորեն	450	տ
բ. գարի	15	տ
գ.կարտոֆիլ	20	տ
դ. կաղամբ	200	տ
ե. բանջարաբոստ. կուլտ.	2000	տ
զ. միրգ	1150	տ
է. կաթ	500	տ
ը.միս	70	տ
թ. բուրդ	3	տ
ի. մեղր	---	տ
ժ. ձու	1200000	հատ
3. Ցանքատարածությունները		
ա. հացահատիկ	130	հա
բ. կարտոֆիլ	7	հա
գ. բանջարաբոստ. կուլտ.	450	հա
դ. կաղամբ	6	հա
ե. մրգատու այգի	149	հա
զ. առվույտ	80	հա
է. կորնգան	-	
ը. միամյա խոտեր	-	
4. Անասնագլխաքանակը, հատ		
ա. խոշոր եղջեր. անասուններ	1604 գլուխ	
այդ թվում կովեր	1200	
բ. մանր եղջեր. անասուններ	980	
այդ թվում մայրեր	540	
գ. խոզեր	580	
այդ թվում մայրեր	120	
դ. թռչուններ	7260 թև	
այդ թվում հավեր	7100	
ե. մեղվաընտանիքներ	---	

5. Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը, հատ այդ թվում

ա. համայնքային սեփ.-ան		բ. մասնավոր սեփականության	
թրթուրավոր տրակտոր	-	թրթուրավոր տրակտոր	5
անիվավոր տրակտոր	-	անիվավոր տրակտոր	15
հացահատիկային կոմբայն	-	հացահատիկային կոմբայն	1
խոտհնձիչ կոմբայն	-	խոտհնձիչ կոմբայն	1
բեռն. ավտոմ. տարբեր մակնիշի	-	բեռն. ավտո. տարբեր մակնիշի	32
տրակտորային կցասայլեր	-	տրակտորային կցասայլեր	8
գութաններ	-	գութաններ	5
կուլտիվատորներ	-	կուլտիվատորներ	5
շարքացաններ	-	շարքացաններ	1
խոտ հակավորող մեքենաներ	-	խոտ հակավորող մեքենաներ	3
պարարտանյութ ցրիչ	-	պարարտանյութ ցրիչ	1
կերամանրիչ	-	կերամանրիչ	-
այլ	-	այլ	-

ՄՐԳԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



վերջի էջ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

1. Համայնքի վարչական շենք
2. Մշակույթի տուն
3. Մսուր-մանկապարտեզ
4. Կոլ. վարչության նախկին գրասենյակ
5. Գրադարան
6. Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ
7. Հուշարձան
8. Փողոցային լուսավորություն
9. Բենզինի պահեստ
10. Պահեստամասային պահեստ
11. Կաթսայատուն
12. Գերեզմանատուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 29 » ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 2016 Թ. N 34

ՄՐԳԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՓԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Մրգաշատ համայքի մանկապարտեզի աշխատանքային գործունեությունը համարել ավարտված 2016 թվականի հոկտեմբերի 1-ից, մանկապարտեզի ջեռուցման բավարար պայմաններ չունենալու պատճառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Վ.Հակոբյան ---------- / ստ./
Ռ.Մովսիսյան ---------- / ստ./
Թ.Մողոմոնյան ---------- / ստ./
Ռ.Խլղաթյան ---------- / ստ./
Գ.Համբարձումյան ---------- / ստ./
Հ.Գալստյան ---------- / ստ./

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կ. Տ.

2016 թվականի
Մեպտեմբերի « 29»
գ. Մրգաշատ

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«29 » ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016 թ. N 35-Ա

<<ՄՐԳԱՇԱՏԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՁԻՋՄԱՆ ՄԱՄԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի երկրորդ մասով, Մրգաշատի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 274-ի N 7 նիստի N 38-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Արմավիրի մարզի <<Մրգաշատի երաժշտական դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության սոցիալապես անապահով ներքոհիշյալ աշակերտներին թույլատրել 2016-2017 թթ. ուս.տարում անվճար հաճախել դպրոց: Նրանց ուսման վարձը ընդամենը կազմում է 135000 /մեկ հարյուր երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Վ.Հակոբյան ---------- / ստ./
Ռ.Մովսիսյան ---------- / ստ./
Թ.Մողոմոնյան ---------- / ստ./
Ռ.Խլղաթյան ---------- / ստ./
Գ.Համբարձումյան ---------- / ստ./
Հ.Գալստյան ---------- / ստ./

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կ. Տ.

2016 թվականի
Մեպտեմբերի « 29»
գ. Մրգաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՍԱՀՄԱՆԻ ՄՐԳԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 29-ի N 7 ՆԻՍՏԻ
N 35-Ա ՈՐՈՇՄԱՆ

Ց Ո Ւ Ց Ա Կ

<<ՄՐԳԱՇԱՏԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

1.	Անի Հովհաննիսյան	27000
2.	Սուրեն Գրգորյան	27000
3.	Գայանե Ղայրամանյան	27000
4.	Ժորա Բարսեղյան	27000
5.	Ժորա Ասատրյան	27000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«29 » ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016 թ. N 36-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի « 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԹԻՎ 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և « Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Մրգաշատի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի «2016 թվականի Համայնքի բյուջեն հաստատելու մասին» թիվ 8 նիստի N 37-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Բյուջեի ծախսային մասում՝

ա/ 11 բաժնի 01 խմբի 2դասի 4891 հոդվածի « 685.0 » թիվը փոխարինել « 187.0 » թվով,

բ/ 01 բաժնի 01 խմբի 1դասի 4235 հոդվածի « 0 » թիվը փոխարինել « 498.0» թվով

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Վ.Հակոբյան ---------- / ստ./

Ռ.Մովսիսյան ---------- / ստ./

Թ.Մողոմոնյան ---------- / ստ./

Ռ.Խլղաթյան ---------- / ստ./

Գ.Համբարձումյան ---------- / ստ./

Հ.Գալստյան ---------- / ստ./

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կ. Տ.

2016 թվականի
Մեպտեմբերի « 29»
գ. Մրգաշատ